Կարգապահական գործ թիվ ԿԳ-15047

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 199-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/118-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Մեժլումյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

Քննության առնելով փաստաբան Գոհար Մանուկյանին (արտոնագիր թիվ 576) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 01.06.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Գոհար Մանուկյանը ունի 80. 000 (ութանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. հունվարից մինչև 2015թ. ապրիլ (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 132-Ա/ԿԳ-15047 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Գոհար Մանուկյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի սեպտեմբերի28-ին, ժամը՝ 19:40-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Գոհար Մանուկյանը ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Գոհար Մանուկյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 20.10.2006թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Գոհար Մանուկյանը ունի 80.000 (ութանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. հունվարից մինչև 2015թ. ապրիլը (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Գոհար Մանուկյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.09.2015թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Գոհար Մանուկյանի նկատմամբ (արտոնագիր 576, ստացված՝ 20.10.2006թ.) 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ հարուցված չեն եղել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գոհար Մանուկյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների

վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Գոհար Մանուկյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. տրամադրված տեղեկանքով:Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ փաստաբանը նախկինում կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Գոհար Մանուկյանին (արտոնագիր թիվ 576) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Գոհար Մանուկյանի (արտոնագիր թիվ 576) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գոհար Մանուկյանին:***

<u>Ծանոթություն.</u>*Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նիստը նախագահող՝ **Լիպարիտ Սիմոնյան**